

**ԳԵՎՈՐԳ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի իրավաբանական ֆակուլտետի, քրեական իրավունքի և քրեական դատավարության ամբիոնի ասպիրանտ



**ԱՆՁԻ ԿԱՄ ՄԵՐՉԱՎՈՐԻ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝  
ԿԱՊՎԱԾ ԱՅԴ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ԻՐ  
ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՄ  
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԵՏ  
(ՀՀ ՔՕ 104-րդ ՀՈՂՎԱԾԻ 2-րդ ՄԱՍԻ 2-րդ ԿԵՏ)**

Անձի կամ նրա մերձավորի սպանությունը՝ կապված այդ անձի կողմից իր ծառայողական գործունեության կամ հասարակական պարտքի կատարման հետ, ներկայացնում է հասարակության համար բարձր վտանգավորության աստիճան, քանի որ ոտնձգություն է կատարում ոչ միայն տուժողի կյանքին, այլ նաև այլ օբյեկտին՝ այն հասարակական հարաբերություններին, որոնք տալիս են անձին իր ծառայողական գործունեությունը կամ իր հասարակական պարտքն իրականացնելու հնարավորություն:

Հարկ է նշել, որ ցանկացած հանցագործության կատարումը որևէ անձի նկատմամբ՝ կապված այդ անձի կողմից իր ծառայողական գործունեության իրականացման կամ հասարակական պարտքի կատարման հետ, ՀՀ ՔՕ 63-րդ հոդվածով դիտարկվում է որպես հանցավորի պատիժը ծանրացնող հանգամանք: Բայց այն դեպքում, երբ տվյալ հանգամանքը նախատեսված է ՀՀ ՔՕ հատուկ մասի համապատասխան հոդվածով որպես հանցագործության որակյալ հատկանիշ, այն կրկնակի չի նշվում որակման և պատժի նշանակման ժամանակ:

Սպանության տվյալ որակյալ տեսակը բաղկացած է 2 հանցակազմերից. առաջինն անձի կամ նրա մերձավորի սպանության կատարումն է՝ կապված տվյալ անձի կողմից իր ծառայողական գործունեության իրականացման հետ, երկրորդը անձի կամ նրա մերձավորի սպանության կատարումն է՝ կապված հասարակական պարտքի կատարման հետ: Ծառայողական գործունեության իրականացման տակ պետք է հասկանալ անձի պարտականությունները, որոնք բխում են աշխատանքային պայմանագրից՝ կնքված պետական մարմինների, տեղական ինքնակառավարման, մասնավոր և այլ հաստատված կարգով գրանցված ձեռնարկությունների և կազմակերպությունների հետ, անկախ սեփականության ձևերից, ձեռնարկատերերի հետ, որոնց

գործունեությունը չի հակասում գործող օրենսդրությանը: Ծառայողական գործունեության այսպիսի ըմբռնումը հիմք է տալիս մտածելու, որ տուժողները կարող են լինել ոչ միայն պաշտոնատար անձինք, այլ նաև պետական և մունիցիպալ աշխատողներ, որոնք չունեն պաշտոնական լիազորություններ, ինչպես նաև ոչ պետական ձեռնարկությունների, հաստատությունների և կազմակերպությունների աշխատողներ, որոնք կատարում են իրենց ծառայողական պարտականությունները:

Հասարակական պարտքի կատարման տակ պետք է հասկանալ քաղաքացու կողմից իրականացվող ինչպես իրեն առանձնապես հանձնարարած պարտականությունների հասարակության օգտին կամ առանձին անձանց օրինական շահերին, այնպես էլ այլ հանրօգուտ գործողությունների կատարումը:

Քրեական օրենսդրությունը ապահովում է ոչ միայն այն անձանց պաշտպանությունը, որոնք իրականացնում են ծառայողական գործունեություն կամ կատարում են հասարակական պարտքը, այլ նաև իրենց մերձավորների: Օրենքը չի կոնկրետացնում մերձավոր անձի հասկացությունը: Հաջողված չի կարելի համարել վերագրումը իրենց շարքին միայն ՀՀ ընտանեկան օրենսգրքով սահմանված մերձավոր բարեկամներին: Տուժողի մերձավորության և հետաքրքրվածության աստիճանը հանցավորի գործողության որակման համար նշանակություն չունի, եթե այդ սպանությամբ հանցավորը նպատակ է հետապնդում վրեժ լուծել անձից իր կատարած ծառայողական գործունեության կամ հասարակական պարտքի համար:

Մերձավոր անձանց շարքին, մերձավոր բարեկամների հետ միասին, դասվում են նաև այն անձինք, որոնք գտնվում են ազգակցության մեջ, խնամության մեջ, ինչպես նաև այն անձինք, որոնց կյանքը, առողջությունը և բարեկեցությունը թանկ են տու-

www.lawinstitute.am

ժողի համար, անձնական հարաբերությունների առաջացման պատճառով: Այստեղ տուժողի մերձավորների տակ պետք է հասկանալ ինչպես նրա բարեկամներին՝ ծնողներ, երեխաներ, որդեգրողներ, հարազատ եղբայրներ և քույրեր, տատ, պապ, թոռներ, այնպես էլ ամուսիններին, բնակարանակիցներին, ինչպես նաև այլ անձինք, որոնք թանկ են տուժողի համար: Օրինակ՝ այլ բարեկամներ, փեսացու, հարս, սիրելի, սիրուհի, ընկերներ և այլն:

ՀՀ ՔՕ 104-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով սահմանված արարքի որակումը թույլատրելի է, եթե հանցավորը գիտակցել է, որ նրա գործողությունները ուղղված են անձի կամ նրա մերձավորի կյանքի դեմ՝ կապված այդ անձի ծառայողական գործունեության իրականացման կամ հասարակական պարտքի կատարման հետ: Անհրաժեշտ է տարբերել անձի կամ նրա մերձավորի սպանությունը՝ կապված այդ անձի ծառայողական գործունեության իրականացման կամ հասարակական պարտքի կատարման հետ այն անձի սպանությունից, որն իրականացնում է ծառայողական գործունեություն կամ կատարում է հասարակական պարտքը: Առաջին դեպքում սպանությունը կատարվում է ծառայողական գործունեության իրականացմանը կամ հասարակական պարտքի կատարմանը խոչընդոտելու նպատակով, կամ վրեժխնդրության հողի վրա կատարած ծառայողական գործունեության կամ հասարակական պարտքի կատարման համար: Եվ տվյալ դեպքում հանցավորի արարքը պետք է որակել ՀՀ ՔՕ 104-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով: Իսկ երկրորդ դեպքում հանցավորի արարքը պետք է որակել որպես հասարակ սպանություն (ՀՀ ՔՕ 104-րդ հոդվածի 1-ն մաս): Այսպես, անձանց օրինական ծառայողական գործունեության ընթացքում չի բացառվում տվյալ անձի սպանությունը այլ շարժառիթներով: Օրինակ՝ շահադիտական կամ խուլիգանական դրդումներով ծառայողական գործունեություն իրականացնող անձի սպանությունը:

Պրակտիկան չի ընդունում տվյալ որակյալ հատկանիշի առկայությունը, եթե վրեժխնդրության հողի վրա անձի սպանությունը կատարվել է այդ անձի կողմից իր ծառայողական պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կերպով կատարման համար, քանի որ այս դեպքերում չկա ոտնձգություն դեպի լրացուցիչ օբյեկտ, այսինքն՝ չկա տուժողի *օրինաչափ* ծառայողական գործունեության խոչընդոտում: Այստեղից պետք է եզրակացնել, որ եթե անձին զրկում են կյանքից վրեժխնդրության հողի վրա իր անօրինական վարքի համար, ՀՀ ՔՕ 104-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը կիրա-

ռելի չէ: Այսպես, օրինակ, եթե սպանության համար առիթ են հանդիսացել տուժողի անօրինական գործողությունները՝ կապված ծառայողական լիազորությունների սահմանազանցման հետ, կատարվածը չի կարող որակվել ՀՀ ՔՕ 104-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով: Դատաքննչական պրակտիկայում հանցանքը որակվում է ՀՀ ՔՕ 104 հոդվածի 1-ին մասով, որպես հասարակ սպանություն<sup>1</sup>: Ա. Ա. Թամազյանը պրակտիկայից ներկայացնում է անձի սպանության հետևյալ օրինակները՝ կապված տվյալ անձի կողմից կատարած ապօրինի ծառայողական գործունեության իրականացման հետ՝

- փորձագետի սպանությունը վրեժխնդրության հողի վրա ակնհայտ սխալ եզրակացություն ներկայացնելու համար,
- թարգմանչի սպանությունը՝ կապված ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու հետ,
- անձի սպանությունը վրեժխնդրության հողի վրա՝ քվեարկության արդյունքների կեղծման համար և այլն<sup>2</sup>:

Բոլոր վերոհիշյալ դեպքերում հանցավորների արարքը հարկավոր է որակել ՀՀ ՔՕ 104 հոդվածի 1-ին մասով, որպես հասարակ սպանություն:

Ա.Ն. Պոպովը կարծում է, որ չի կարելի անձի կամ նրա մերձավորի սպանության, կապված այդ անձի կողմից ծառայողական գործունեության իրականացման կամ հասարակական պարտքի կատարման հետ, հանցակազմի պարտադիր հատկանիշներին վերագրել տվյալ գործունեության օրինաչափ բնույթը<sup>3</sup>: Ա.Ն. Պոպովի կարծիքով, որպես տվյալ որակյալ սպանության պարտադիր հատկանիշ, անհրաժեշտ է դիտել տուժողի գործունեության հանրօգուտ բնույթը, քանի որ ոչ միշտ անօրինաչափ գործունեությունը հանդես է գալիս հասարակության համար վտանգավոր: Այսինքն հեղինակը չի բացառում տուժողի անօրինական գործունեության մեջ հանրօգուտ բնույթի առկայությունը: Օրինակ՝ հանցագործի բացահայտման նպատակով անօրինական ձևով իրականացվում է հեռախոսային խոսակցությունների լսում այն անձի կողմից, որը նման լիազորություն չունի: Արդյունքում հանցագործը, նկատելով տվյալ անձին, սպանում է նրան: Հեղինակը առաջարկում է տվյալ արարքը որակել որպես անձի սպանություն՝ կապված այդ անձի կողմից իր ծառայողական գործունեության իրականացման կամ հասարակական պարտքի կատարման հետ: Բայց ՌԴ-ի ՀՀ պրակտիկայում վերոհիշյալ արարքը որակվում է որպես հասարակ սպանություն:

Հարկ է նշել, որ չի թույլատրվում անձի կամ նրա մերձավորի սպանությունը՝ կապված այդ ան-

ծի կողմից իր ծառայողական գործունեության իրականացման և հասարակական պարտքի կատարման հետ, և այլ հանցանքը թաքցնելու կամ հեշտացնելու նպատակով կատարված սպանությունը որակել համակցությամբ, քանի որ տվյալ հանցակազմերը նախատեսում են քրեական պատասխանատվություն կոնկրետ շարժառիթներով կատարված սպանության համար: Իսկ որակման կանոններին համաձայն, վերը նշված դեպքում կիրառվում է շարժառիթներից մեկը (գերագույնը), այսինքն՝ միևնույն հանցագործության մեջ շարժառիթներ չեն համակցվում, այլ մրցակցում են:

Սպանության տվյալ որակյալ տեսակը պետք է տարբերել պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանությունից (ՀՀ ՔՕ 305-րդ հոդված): Տարբերությունը արտահայտվում է նրանում, որ ՀՀ ՔՕ 305-րդ հոդվածը նախատեսում է պատասխանատվություն անձի սպանության համար՝ կապված **կոնկրետ** ծառայողական կամ հասարակական գործունեության իրականացման հետ, որը նախատեսված է օրենքով, իսկ ՀՀ ՔՕ 104-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը նախատեսում է պատասխանատվություն անձի սպանության համար՝ կապված ցանկացած ծառայողական գործունեության հետ: Այս հանցակազմը (ՀՀ ՔՕ 305-րդ հոդված) ուսումնասիրվող հանցակազմից օրենսդրի կողմից առանձնացվել է որպես հատուկ նորմ, իսկ որակման կանոններին համաձայն՝ ընդհանուր և հատուկ նորմերի մրցակցության ժամանակ գործում է հատուկ նորման: Այսպիսով, պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության, որը կապված է նրա նշված գործունեությունը դադարեցնելու նպատակով, կատարման դեպքում հանցավորի արարքը ենթակա է որակման ՀՀ ՔՕ 305-րդ հոդվածով: Բացառություն է կազմում, ինչպես Հայաստանում, այնպես էլ Ռուսաստանում, 14-16 տարեկան անձի կողմից պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության կատարումը: Տվյալ արարքը անհրաժեշտ է որակել որպես անձի կամ նրա մերձավորի սպանություն՝ կապված այդ անձի կողմից իր ծառայողական գործունեության իրականացման կամ հասարակական պարտքի կատարման հետ, քանի որ ՀՀ ՔՕ 305-րդ հոդվածով նախատեսված հանցագործության սուբյեկտ կարող է հանդիսանալ միայն 16 տարին լրացած մեղսունակ ֆիզիկական անձը:

Պրակտիկայում երկու անձանց սպանության դեպքում, երբ տուժողներից մեկը պետական կամ հասարակական գործիչ է, իսկ մյուսը՝ հասարակ մարդ, հանցավորի արարքը որակվում է ՀՀ ՔՕ

104-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ն մասի և ՀՀ ՔՕ 305-րդ հոդվածի համակցությամբ (որպես երկու անձանց սպանություն և պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանություն)<sup>4</sup>: Սակայն նման որակումը խախտում է արդարության սկզբունքը (ՀՀ ՔՕ 10-րդ հոդված), քանի որ միևնույն հանցանքի համար (հատուկ օբյեկտի կյանքի դեմ ոտնձգության համար) հանցավորը կրկնակի ենթարկվում է քրեական պատասխանատվության, համապատասխան հատուկ նորմայով (ՀՀ ՔՕ 305-րդ հոդված), որտեղ տուժողի կյանքը լրացուցիչ օբյեկտ է և ՀՀ ՔՕ 104 հոդվածի 2-րդ մասի 1-ն կետով, որտեղ իր կյանքը, վերածվում է հիմնական օբյեկտի: Որակման կանոններին համաձայն, միևնույն հանցագործության մեջ միևնույն օբյեկտը չի կարող միաժամանակ լինել և՛ հիմնական, և՛ լրացուցիչ: Այսպիսով նման որակումը համարվում է ոչ լիարժեք և խախտում է արդարության սկզբունքը: Մենք կարծում ենք, որ երկու անձանց սպանության կատարման դեպքում, երբ տուժողներից մեկը պետական կամ հասարակական գործիչ է, հանցավորի արարքը ենթակա է որակման ՀՀ ՔՕ 104-րդ հոդվածի 1-ն մասի և ՀՀ ՔՕ 305-րդ հոդվածի համակցությամբ:

Դատական պրակտիկայում հանդիպում են դեպքեր, երբ հանցավորը փորձում է սպանել անձին կամ նրա մերձավորին՝ կապված այդ անձի կողմից կատարած ծառայողական գործունեության կամ հասարակական պարտքի կատարման հետ, բայց նա սխալմամբ մեկ ուրիշ անձին է մահ պատճառում:

Քրեական իրավունքի տեսության մեջ տվյալ արարքը որակվում է ոչ միանշանակ: Այսպիսով, քրեական իրավունքի տեսության մեջ փաստական սխալի դեպքում տվյալ սպանությունը մի դեպքում որակվում է որպես հասարակ սպանություն, մյուս դեպքում՝ որակյալ սպանություն, երրորդ դեպքում՝ որակյալ սպանության փորձ, չորրորդ դեպքում՝ ավարտված հասարակ սպանություն և որակյալ սպանության փորձ: Տվյալ իրավիճակներում անհրաժեշտ է առաջնորդվել որակման կանոններով, որոնք գործում են փաստական սխալի ժամանակ: Արգելվում է տվյալ արարքը օբյեկտի փաստական սխալի դեպքում որակել հետևանքներով: Այսինքն, արգելվում է տվյալ արարքը որակել որպես հասարակ սպանություն, քանի որ հանցավորի դիտավորությունը ուղղված է անձի կամ նրա մերձավորի սպանությանը՝ կապված այդ անձի կողմից ծառայողական գործունեության իրականացման կամ հասարակական պարտքի կատարման հետ: Նաև սխալ է համարվում որակել տվյալ արարքը որպես անձի կամ նրա մերձավորի ավարտած սպանու-

թյուն՝ կապված այդ անձի կողմից իր ծառայողական գործունեության իրականացման կամ հասարակական պարտքի կատարման հետ, քանի որ իրականում մահը սխալմամբ պատճառվել է մեկ ուրիշ անձին:

Գատաքննչական պրակտիկայում փաստական սխալի դեպքում տվյալ արարքը որակվում է ՀՀ ՔՕ 104-րդ հոդվածի 1-ն մասի և ՀՀ ՔՕ 34-րդ հոդվածի, ՀՀ ՔՕ 104-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համակցությամբ (որպես ավարտված հասարակ սպանության և անձի կամ նրա մերձավորի սպանության փորձի՝ կապված այդ անձի կողմից իր ծառայողական գործունեության իրականացման կամ հասարակական պարտքի կատարման հետ, համակցությամբ)<sup>5</sup>: Նման որակման հետ համաձայնել հնարավոր չէ, քանի որ այդպիսի որակումը խախտում է արդարության սկզբունքը՝ միևնույն արարքի համար արգելվում է կրկնակի անձին քրեական պատասխանատվության ենթարկել: Այս խնդրի լուծման համար մենք առաջարկում ենք տվյալ արարքը դատաքննչական պրակտիկայում որակել որպես եզակի հանցագործություն՝ անձի կամ նրա մերձավորի սպանության փորձ՝ կապված այդ անձի կողմից իր ծառայողական գործունեության իրականացման կամ հասարակական պարտքի կատարման հետ (ՀՀ ՔՕ 34-րդ հոդված, ՀՀ ՔՕ 104-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետ): Նշենք, որ հանցափորձի ժամանակ պատժի ժամկետը չի կարող գերազանցել համապատասխան հոդվածով նախատեսված պատժի առավելագույն ժամկետի երեք քառորդը<sup>6</sup>: Պատժի առավելագույն ժամկետը

անձի կամ նրա մերձավորի սպանության փորձի ժամանակ՝ կապված այդ անձի կողմից իր ծառայողական գործունեության իրականացման կամ հասարակական պարտքի կատարման հետ, համարվում է 11 տարով ազատազրկումը (15 տարվա երեք քառորդը): Ինչպես տեսնում ենք, տվյալ արարքի հանրության համար վտանգավորության աստիճանը և բնույթը հաշվի է առնվում օրենսդրի կողմից քրեաիրավական նորմայի կառուցման և ստեղծման ժամանակ: Այդ պատճառով մենք առաջարկում ենք տվյալ արարքը դատաքննչական պրակտիկայում որակել որպես անձի կամ նրա մերձավորի սպանության փորձ՝ կապված այդ անձի կողմից իր ծառայողական գործունեության իրականացման կամ հասարակական պարտքի կատարման հետ:

Գլխավոր հատկանիշը, որ անհրաժեշտ է ապացուցել ՀՀ ՔՕ 104 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցագործության որակման ժամանակ, օրինաչափ գործունեության խոչընդոտման նպատակն է կամ նման գործունեության համար վրեժխնդրությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը, կարելի է հաստատել, որ նման սպանությունը կարող է կատարվել միայն ուղղակի դիտավորությամբ, քանի որ ՀՀ ՔՕ 104-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով սահմանված հանցագործության որակման համար անհրաժեշտ է, որ հանցավորի դիտավորությունը ուղղված լինի անձի կամ նրա մերձավորի սպանությանը՝ կապված այդ անձի կողմից իր ծառայողական գործունեության իրականացման կամ հասարակական պարտքի կատարման հետ:

**Օգտագործված գրականություն**

1. ՀՀ Քրեական օրենսգիրք, «Պաշտոնական տեղեկագիր», Երևան, 2009:  
2. Թամազյան Ա. Ա. Ծանրացնող հանցամանքներում կատարված սպանություններ, Երևան, 2003:  
3. Թամազյան Ա. Ա. Ծառայողական պարտականության և հասարակական պարտքի կատարման հետ կապված սպանություններ // Օրենք և իրականություն, Երևան, 02.02.2007, № 2:  
4. Попов А. Н. Убийства приотягчающих обстоятельствах. СПб., 2003.  
5. Бородин С. В. Преступление против жизни. М., 1999.  
6. Андреева Л. А. Квалификация умышленных убийств, совершённых приотягчающих обстоятельствах. М., 1989.  
7. Красиков А. Н. Преступления против прав человека на жизнь. Саратов, 1999.  
8. Плаксина Т. А. Уголовная ответственность за убийство. Ч. 2. Барнаул, 2000.  
9. Семершева Н. К. Вопросы квалификации умышленных убийств. Свердловск, 1984.  
10. Здравомыслов Б. В. Уголовное право Российской Федерации. Особенная часть. М., 2000.  
11. Скуратов Ю. И., Лебедев В. М. Комментарий к уголовному кодексу РФ. М., 1999.

<sup>1</sup>Տե՛ս Թամազյան Ա. Ա. Ծանրացնող հանցամանքներում կատարված սպանություններ, Երևան, 2003, էջ 54:  
<sup>2</sup>Տե՛ս Թամազյան Ա. Ա. Ծառայողական պարտականության և հասարակական պարտքի կատարման հետ կապված սպանություններ // Օրենք և իրականություն, Երևան, 02.02.2007, № 2, էջ 11:  
<sup>3</sup>Տե՛ս Попов А. Н. Убийства приотягчающих обстоятельствах. СПб, 2003. С. 249-250.  
<sup>4</sup>Տե՛ս Թամազյան Ա. Ա. Ծանրացնող հանցամանքներում կատարված սպանություններ, Երևան, 2003, էջ 57:  
<sup>5</sup>Տե՛ս Թամազյան Ա. Ա. Ծանրացնող հանցամանքներում կատարված սպանություններ, Երևան, 2003, էջ 58:  
<sup>6</sup>Տե՛ս ՀՀ Քրեական օրենսգիրք, «Պաշտոնական տեղեկագիր», Երևան, 2009, 65-րդ հոդվածի 3-րդ մաս:

www.lawinstitute.am